## Ս. ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

# «ՀԱՎԱՏԱՄՔԻ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ էջ 6*

Ուրեմն այլեւ ինչո՞ւ, այսքան ճշգրիտ հավատաբանությունից հետո, հեղաշրջում ու փոփոխում են ճշմարտությունը՝ ընդդիմանալով հոգեկիր (Սուրբ Հոգին կրող) անձանց եւ Աստծուց ավանդված Ավետարանին, որոնք մարմնացյալ Խոսքին ճանաչում են իբրեւ ճշմարիտ Աստված։ Եվ ամեն տեղ խոսվում է Մե՛կ Որդու մասին՝ աստվածությամբ ու մարդկությամբ, որ երբ Աստծո Խոսքը մարդ դարձավ, մնաց նույն Աստվածը՝ Հոր կերպարանքով։ Հետեւաբար անխոտոր հետեւենք սուրբ հայրերի շավիղներին՝ դավանելով Հայր Աստծուց Ծնված Միածնին կուսական ծննդյամբ մեզ պես մարդ դարձած եւ մարմնի մեջ բոլոր [մարդկային կրքերը] կրած, մեղքից բացի, ինչպես ցույց է տալիս այս դավանության հաջորդ խոսքը։

**Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, մեռելների հետ եղավ, գերեզման դրվեց եւ երրորդ օրը հարություն առավ.**
**(Չարչարեալ, խաչեալ, թաղեալ եւ ընդ մեռեալս լեալ, ի գերեզմանի եդեալ եւ յերիր աւուր յարուցեալ) (ժամագրքում տեղ գտած եւ այսօր գործածվող հանգանակում՝ «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ»)**

Որ ըստ աստվածային բնության անչարչարելի է Խոսքը, թող ոչ ոք սրանում չտարակուսի կամ չկարծի, թե գերագույն Էությունը կարող է մահվան չարչարանքների տակ ընկնել. սակայն մարդանալիս վերցնելով՝ Կույսի արյունից ու շնչից՝ դրանով նաեւ չարչարվելն է սեփականացրել։ Աստվածաշունչը խոսում է Աստծո Խոսքի եւ չարչարանքի մեջ անչարչար Մնացողի՝ իբրեւ մարդ չարչարվելու մասին,



որպեսզի խոստովանվի, որ մեր փրկությունն Աստծով է [իրականացել]։ Որովհետեւ եթե Աստված էր եւ մարդ դարձավ՝ չդադարելով Աստված լինելուց, բնությամբ Արարիչը դարձավ արարածներից մեկը, Օրենսդիրը մտավ Օրենքի տակ, Աստված առավ ծառայի կերպարանք, եւ Տեր լինելուց չհրաժարվելով՝ Միածինը «բազում եղբայրների մեջ անդրանիկ եղավ» (հմմտ. Հռոմ. Ը 29), նմանապես էլ իբրեւ մարդ չարչարվեց մարմնով, սակայն իբրեւ Աստված անչարչարելի է դավանվում։ Եվ միշտ կենդանի Հոր Ծնունդը, որ կյանք եւ կենարար է, ինչպես նաեւ «ննջեցյալների առաջին պտուղը» (Ա Կոր. ԺԵ 20), քանի որ Իր մարմինը մահն ընդունող դարձրեց Աստծո շնորհով, ապա, ինչպես ասում է Պողոս [առաքյալը], ամենքի համար մահ ճաշակեց մարմնով (տես Եբր. Բ 9), որով էր հնարավոր չարչարվել, առանց սակայն Կյանք լինելուց հրաժարվելու։ Ուստի Իր մարմնո՛վ եւ ոչ թե Աստվածության բնությամբ ընդունեց չարչարանքները, եւ Նա, Ով չարչարանքի մեջ անչարչարելի է, Նույնը նաեւ մահվան մեջ էր կենդանի եւ մահվանից ազատ, իսկ հարություն առնելով՝ մահվանն ու ապականությանը հաղթեց ու խափանեց, ինչպես ասում է մարգարեն եւ բացատրում առաքյալը. մահը խափանվեց՝ կյանքից պարտվելով, ինչի մասին հեգնաբար ասվում է. «Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը, որով զորանում էիր, եւ ո՞ւր է, դժո՛խք, քո խայթոցը, որով սպանում էիր» (հմմտ. Ովսե ԺԳ 14, Ա Կոր. ԺԵ 55)։ Քանզի Կենարարի ձեռքով մեռար, Անարատի՝ խաչի վրա բարձրանալով խայտառակվեցիր եւ այժմ մեռած, անզոր ու անկենդան ես։ Ըստ ձեւի՝ սա հիշեցնում է Մովսեսի ողջախոհ օձը, որն օրինակն էր եւ ցույց տվողը տերունական անմեղ մարմնի։ Սա՛ է Տիրոջ հարության գործը, ինչից հետո նաեւ Նրա համբարձման դավանումն է ներկայացվում։

*Շարունակելի*

*Թարգմանությունը գրաբարից՝ Ս.Ս.-ի*

## ԵՐԱՆԵԼԻ ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱՆՀԱՅՍԿԻ)

# ՄԱՆՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐ

Երբ նայում ես ավետարանական մեղավորներին, լսում նրանց խոսքերը, տեսնում նրանց արարքները, ակամա մտածում ես՝ սրանք ի՞նչ մեղավորներ. ըստ էության, մեր համեմատությամբ, սրանք լավ մարդիկ են։

Ահա տեսե՛ք, Աստծո պատվիրանների խախտումի պատճառով գազազած ամբոխը մոտենում է Փրկչին։ Նա իր հետ քարշ է տալիս անհավատարմության մեջ բռնված մի կնոջ եւ պատրաստ է դրա համար նրան քարերով սպանել... Սակայն ի՞նչ ակնածանքով է այդ ամբոխը լսում Փրկչի իմաստուն ու մեղմաբարո խոսքերն իր հասցեին, եւ ինչ ուժեղ, կենդանի է խոսում այդ պահին ամբոխից յուրաքանչյուրի մարդկային խղճի ձայնը։ Մի՞թե նման բան հնարավոր է այժմ։ Լռելյայն, իրենց խղճի ներքին դատով մերկացված, այդ մեղավորները գնում են... Արդյոք կարո՞ղ է նման բան լինել մեր օրերում։ Դժվար է պատկերացնել, որ մեր ժամանակների մարդիկ ի զորու լինեն այդչափ անկեղծորեն ու այդչափ կրոնասիրությամբ զայրանալ շնության առիթով. այդ մեղքն այսօր գովաբանվում, պարուրվում է գրականության, թատրոնի, կինոնկարների շքեղ ժապավենների բոլոր տեսակներով։ Բազում ընդօրինակությունների մի բնագավառ է այն՝ իր յուրօրինակ սնափառությամբ ու հերոսականությամբ։ Մի՞թե մեղքի նկատմամբ այժմ հնարավոր է կրոնական նման դրսեւորում ունենալ, ինչպիսին ուներ երուսաղեմյան հրեական ու հեթանոսական այդ ամբոխը։ Դժվար է պատկերացնել, որ մեզանում սոցիալական ինչ-որ խմբավորում ներկայացնող մարդիկ կարող են նման կրքոտ նախանձախնդրություն ունենալ Աստծո օրենքի կատարման հանդեպ եւ նման սքանչելի խոնարհությամբ ամաչել՝ իրենց էությունը բացահայտող հոգեւոր Ուսուցչի հեզաբարո ու մեղմաշունչ խոսքերից։ Նայեցեք, թե ինչպես բոլորը, մեկը մյուսի ետեւից, սկսեցին հեռանալ։ Հասարակական շատ քիչ մեղադրողներ կարող են այսօր իրենց մերձավորների հանդեպ դրսեւորել նման բարոյական նրբազգացություն։



Ապա ավետարանական մեղավոր անառակ որդին... Ինչպես է նա ազդում մեր գիտակցության վրա՝ իր նուրբ ու անկեղծ ապաշխարությամբ։ Զարմանալի մի հոգի՝ զգացմունքների ու ապրումների խոնարհությամբ. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատողներից մեկը» (Ղուկ. ԺԵ 18-19)։

Մեր դեմ կանգնած են ահա եւ ավետարանական մեծ մեղավորները՝ Սուրբ Հոգուն ստողներ Անանիան եւ Սափիրան, որոնք իրենց մեղքի, այն է՝ Աստծուն՝ կամովին նվիրաբերած սեփական ագարակի գումարից գողանալու պատճառով հանկարծակի մահանում են։ Մեր օրերի հոգեւոր երեսպաշտության համեմատությամբ նրանք նույնիսկ նորածիններ են թվում։ Որքան քրիստոնյաներ ու հովիվներ մեր օրերում խոստանում են Աստծուն տալ իրենց ողջ կյանքը, սակայն տալիս են լոկ չնչին մասնիկը՝ մնացյալը թաքցնելով իրենց եսասիրական նպատակների համար։

Իսկ ապա Հիսուս Քրիստոսի ժամանակների մաքսավորները, հարկահավաքները... Առաջին դարի այդ չինովնիկները, որոնցից այնպես զարշում էր պաղեստինյան ժողովուրդը, արդյո՞ք երեխաներ չեն մերօրյա բոլոր երկրների ու բոլոր ժողովուրդների շատ չինովնիկների համեմատությամբ։ Նույնիսկ դասական, մարդկության կողմից մշտապես հիշատակվող ավազակ Բարաբբայի (որն անկասկած, ճանապարհին ինչ-որ մեկին սպանել էր) հանցագործությունը դժվար է բնութագրել՝ մեր օրերի «հանուն պետության շահերի» կատարվող այն միլիոնավոր անմեղ մարդկանց, նրանց կանանց ու երեխաների պարբերաբար, մտածված ու դաժան սպանությունների ֆոնի վրա։

Նայեցեք Զակքեոս մաքսապետին. տեսեք, թե ինչպիսի եռանդով էր նա վազում դեպի ծառը, որպեսզի բարձրանա նրա վրա եւ տեսնի Փրկչին։ Ինչպե՜ս էր նա ուզում տեսնել Փրկչին, ինչպես էր ուրախանում՝ Փրկչին տեսնելու մտքից...

Ավետարանները մեզ սովորեցնում են ոչ միայն իրենց արդարներով. նրանք մեզ ապաշխարության, մեզ դեպի Աստված են տանում նաեւ իրենց մեղավորների կերպարներով, նրանց մարդկայնությամբ, նրանց՝ բարու հանդեպ ունեցած նրբազգացությամբ։

Ահա եւ նրանք, որոնք բերում եւ կոտրում են թանկարժեք մյուռոնով լեցուն ալաբաստրի անոթը, որպեսզի օծեն Հիսուսի մարմինը, նրանք, որ իրենց ուրացումի պատճառով դառնորեն լաց են լինում, եւ նրանք, որ երկնային տեսիլքից ապշահար կանգ են առնում ճանապարհին, ինչպես Սավուղը... Նրանք բոլորն էլ փոխում են իրենց կյանքը եւ կամ՝ սեփական խաչի վրա իրենք իրենց մեղադրելով՝ աղերսում են Տիրոջը, որ «հիշի իրենց»։

Ապա դառնանք մեզ։ Ո՞ւր է մեր մեռոնը, ուր են մեր արցունքները, ուր է մեզ դատափետող մեր խղճի նրբազգացությունը... Նման ոչ մի բան։ Մենք տրվում ենք մեր հաշվարկներին, ծրագրերին, զգացմունքներին, կրքերին եւ մոռանում ենք մեզ քնքշորեն սիրող Քրիստոսի ճշմարտությունը։ Մենք հեռացել ենք ոչ միայն Ավետարանից, այլեւ նույնիսկ անցել ավետարանական մեղավորներից...

Աստված մեծ ուժ է ներդրել Իր Խոսքում։ Հին մեղավորները մեզ ապշեցնում են իրենց մարդկայնությամբ ու հնազանդությամբ, որ առկայծում են նրանց հենց մեղքի միջից։ Այդ մեղավորների կերպարներով, որոնք զերծ են մեզ բնորոշ անսպառ ինքնաբավությունից ու եսասիրությունից, Աստված կամենում է սթափեցնել մեզ եւ սովորեցնել, որ մենք եւս կարող ենք դառնալ գոնե նման մարդկային մեղավորներ, եթե անհնարին ենք համարում մեծ սերն առ Աստված։ Չի բացառվում, որ Աստված կամենում է մեր մեջ բխեցնել ոչ թե արցունքներ, այլ արցունքի մի ողջ հոսանք՝ նժարին դնելով մեր զգացումներն ավետարանական այդ մեղավորների ապրումների հետ։ Մենք պարզ տեսնում ենք, թե ովքեր են ավետարանական մեղավորները, եւ թե մենք ինչ ենք մեզնից ներկայացնում՝ մեր քաղաքակրթվածությամբ հանդերձ։

Երուսաղեմի տաճարում ինքն իրեն գովաբանող հին փարիսեցին, իհարկե, մանուկ է մեր աշխարհի շատ հասարակական, քաղաքական, նույնիսկ եկեղեցական գործիչների համեմատությամբ՝ նրանց բացահայտ ու քողարկված ինքնագովազդները նկատի առնելով։

Ավետարանական մեղսագործությունը մի «հովվական սրինգ» է մեր օրերի մեղքի՝ անդադրում, խլացուցիչ եւ անպասկառ երաժշտության համեմատ։ Ոչ միայն եզակի մարդիկ, այլեւ հոծ խմբերով են այսօր ընդվզում Աստծո Հոգու դեմ։ Այսօր աշխարհում սպիտակը համառորեն կոչվում է սեւ, իսկ սեւը՝ սպիտակ...

«Լեռնե՛ր, ընկե՛ք մեզ վրա, բլուրնե՛ր, ծածկեցե՛ք մեզ»։

Ո՞վ ունի մեր օրերում մաքսավորի պես իր աղոթքը հնազանդորեն մրմնջալու ուժը։ Մենք բոլորս մեզ համարում ենք հաջողակ մաքսավորներ, իսկ մեր մերձավորներին՝ փարիսեցիներ։

*Շարունակությունը՝ էջ 8*

## ՎԱՏԻԿԱՆԸ ՀԵՌԱՆԿԱՐ Է ՏԵՍՆՈՒՄ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ

Քրիստոնեական միությանն աջակցող Պապական խորհրդի անդամ Ժոզեֆ Մայը հայտարարել է, որ Վատիկանի եւ Ռուս եկեղեցու միջեւ ընթացող երկխոսությունն ապագա ունի: Նա նշել է, որ վերջին շրջանում առկա լարվածությունն առավելապես իրադրության սխալ մեկնաբանության արդյունք է: Որպես լավ հարաբերությունների վառ օրինակ՝ նա վկայակոչել է Ալեքսի Բ-ի ծննդյան շնորհավորական ուղերձը Հռոմի Պապին:

## ՎԱՏԻԿԱՆԸ ՄԻԱՆՇԱՆԱԿ ԴԵՄ Է ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Վատիկանը մտադիր է հանձնախումբ ուղարկել Իրաք՝ պատերազմը կանխելու համար: Առայժմ չեն նշվում այն կոնկրետ քայլերի մասին, որոնք Ս. Աթոռը մտադիր է իրականացնել Իրաքում: Բացառված չէ, որ Հռոմի Պապը հանդիպի Սադամ Հուսեյնի կամ էլ Ջորջ Բուշի հետ: Վատիկանի՝ պետությունների հետ հարաբերության բաժնի նախագահ Ժան-Լուի Թորան արքեպիսկոպոսը լրագրողներին հայտնել է, որ Իրաքի դեմ հարձակումն օրինական կլինի միայն այն դեպքում, եթե ՄԱԿ-ը տա իր համաձայնությունը:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԱՐԻ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Շվեյցարիան այս տարին հռչակել է որպես Աստվածաշնչի տարի: Բեռնում տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ Բազելի եպիսկոպոս Կուրտ Կոխը նշել է, որ առանց Ս. Գրքի եվրոպական մշակույթն անիմաստ կլիներ: Ըստ նրա՝ Շվեյցարիայում հետաքրքրությունն Աստվածաշնչի նկատմամբ չի մարում, որի ակնհայտ վկայությունն այն է, որ ամեն տարի եվրոպական այս երկրում վաճառվում է Ս. Գրքի շուրջ 60.000 օրինակ:

Տարին աստվածաշնչյան է հռչակվել նաեւ եվրոպական այլ երկրներում՝ Ֆրանսիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Լյուքսեմբուրգում եւ Լիխտենշտեյնում:

## ԵՐԱՆԵԼԻ ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱՆՀԱՅՍԿԻ)

# ՄԱՆՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ էջ 7*

Մենք չենք զղջում, ինչպես Պետրոսը, չենք տալիս աղքատներին մեր ունեցվածքի կեսը, ինչպես Զակքեոսը, այն էլ Հիսուսի լոկ մի հայացքից: Կամ՝ եթե մոռանայինք միայն մեր ձեթը, ինչպես ավետարանական անխոհեմ կույսերը, կամ էլ քանքարը գցեինք անբերրի հողում միայն. այդ դեպքում թերեւս վրադիր մեղք չէինք գործի: Երանի թե մեր հայացքը շրջեինք միայն հենց Իրենից՝ ճշմարտությունից եւ կարողանայինք զբաղվել միայն մեր ընտանեկան գործերով եւ կամ բարեսրտորեն տուրք տայինք մեր զգացմունքներին... Բայց, ցավոք, մենք մասնակցում ենք նաեւ աշխարհում կատարվող բազում հանցագործությունների՝ մարդկանց ու ժողովուրդների հանդեպ հատուկ հոգածության անվան տակ:

Նույնիսկ ավետարանական ամենամեծ մեղսագործը՝ Հուդան, իր հուսահատության մեջ, գիտակցեց իր մեղքը, եւ թեպետ ճշմարտապես Աստծո առաջ չզղջաց, այնուհանդերձ, դեն նետեց հանցավոր դրամները՝ դավաճանության իր վարձը, եւ խղճի տանջանքների մեջ աղաղակեց. «Մեղանչեցի, որովհետեւ արդար արյուն մատնեցի»:

Իսկ մեր օրերում մարդկանց ու ժողովուրդների կեղծ ու շինծու բարեկեցությունն արդյոք չի՞ կառուցվում շատերի անմեղ տառապանքների հաշվին:

Ուշադիր զննելով Ավետարանում բացահայտված մեղքերը եւ հետեւելով մարդկային կյանքի ընթացքին՝ անհնար է չնկատել, որ



արդեն «դռների ետեւում» է վերջին Դատաստանը:

Հիշենք՝ Ավետարանը մեզ ուսուցանում է բարեպաշտություն ոչ միայն իր արդարների միջոցով, այլեւ իր մեղավորների կերպարներով, որպեսզի ոչ մի բանում չգերադասենք մեր ճշմարտությունը, այլ ամբողջ հույսը դնենք Քրիստոսի ճշմարտության վրա: Եվ Աստծո ողորմությամբ մուտք գործենք այդ ճշմարտությունից ներս:

*Թարգմ.*
*Գ. Վարդանյանի*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐՆ ԱՆՈՂՈՔ ՊԱՅՔԱՐ ԵՆ ՄՂՈՒՄ ՏՈՏԱԼԻՏԱՐ ԱՂԱՆԴՆԵՐԻ ԴԵՄ

ՌԴ կոմունիստական կուսակցության երիտասարդական թեւը փետրվարի 9-ին նստացույց է կազմակերպել Եհովայի վկաների շենքի մոտ՝ «Ո՛չ Ռուսաստանի հոգեւոր շրջափակմանը» կարգախոսով: Նրանք անհանգստացած են, որ այսօր իրենց երկրում շատացել են տոտալիտար աղանդների հետեւորդները՝ հատկապես երիտասարդների շրջանում: Ռուսաստանում այսօր չկա ազդեցիկ մի կուսակցություն, որը պատրաստ է պաշտպանելու երիտասարդների շահերը նմանատիպ աղանդների դեմ, որոնք էլ ավելի են բթացնում մարդու գիտակցությունը: Երիտասարդ կոմունիստները մտադիր են պահանջել, որ Եհովայի վկաների զբաղեցրած շենքը հանձնվի տոտալիտար աղանդներից տուժած երիտասարդներին՝ որպես վերականգնողական կենտրոն:

## ՆՈՐ ՎԱՏԻԿԱՆ ԿՐԵՄԼԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՌԴ Պետդումայի պատգամավոր Սերգեյ Յուշենկովն առաջարկել է Կրեմլի տարածքում Վատիկանի նման ստեղծել ուղղափառ անկախ պետություն: Ըստ նրա՝ այս խնդիրը կարելի է լուծել մինչեւ 2018 թ., որով եւ կյանքի կկոչվի Մոսկվայի՝ որպես Երրորդ Հռոմի՝ դարերով փայփայված հռչակումը: Այս քայլով էլ ավելի կուժեղանա Ռուս եկեղեցին:

## ԻՌԼԱՆԴԻԱՅՈՒՄ ՕԾՎԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Փետրվարի 9-ին, Իռլանդիայի պատմության մեջ առաջին անգամ, Դուբլինում օծվեց Ռուս Ուղղափառ եկեղեցուն պատկանող Ս.Պետրոս-Պողոս տաճարը: Առաջին պատարագին մասնակցել են Իռլանդիայի եկեղեցական եւ պետական իշխանությունների ներկայացուցիչներ, երկրում հավատարմագրված դիվանագետներ եւ բազում ուղղափառ հավատացյալներ: Նշանակալից այս արարողությունը լայնորեն լուսաբանվել է ԶԼՄ-ների միջոցով:

## ՈՒՂՂԱՓԱՌ ԷՔՍԿՈՒՐՍԱՎԱՐՆԵՐ

Մոսկվայի պատրիարքության Ուկրաինայի Ուղղափառ եկեղեցու Պոլտավիայի եւ Կրեմենչուգի Փիլիպոս եպիսկոպոսը հրաման է արձակել, որ այլեւս վանքեր եւ վանական համալիրներ չթողնել այնպիսի զբոսաշրջիկների, որոնց էքսկուրսավարը չունի հոգեւոր կրթություն: Սրբազանը կարծում է, որ էքսկուրսավարները պետք է լինեն միայն քահանաներ ու վանականներ: Այս հայտարարության պատճառն այն է, որ էքսկուրսիաների ժամանակ աշխարհիկ էքսկուրսավարներն աղավաղում են ուղղափառության իսկությունը՝ քարոզելով տարբեր աղանդներին հարիր տեսակետներ:

## ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆՔԱՆ ԷԼ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐ ՉԷ

Ուկրաինայի Ուղղափառ եկեղեցուն անընդհատ մեղադրում են այն բանում, որ նա ընդդիմանում է ծիսական գրքերի վերածմանն արդի ուկրաիներենի, որն այսօր Ուկրաինայի պետական լեզուն է: Այս կապակցությամբ Միտրոփանես եպիսկոպոսը հայտարարել է, որ այս խնդիրն այնքան էլ հրատապ չէ, որքան որ շատերը ցանկանում են ներկայացնել: Ըստ Սինոդի որոշման՝ աստվածպաշտությունը կարող է լինել արդի ուկրաիներենով միայն այն վայրերում, որտեղ հավատացյալները ցանկություն են հայտնել: Եթե եկեղեցական սլավոներենը փոխվի, ապա խնդիր կծագի նաեւ Աստվածաշնչի կանոնիկ թարգմանության հարցում, քանզի Ս. Գրքի առկա բոլոր թարգմանություններն էլ թերի են: Սրբազանն ընդգծել է, որ դարեր շարունակ այս լեզվով են աղոթել իրենց սուրբ հայրերը, եւ եկեղեցական լեզվի փոփոխության մասին հիմնականում խոսում են նրանք, ովքեր ընդհանրապես եկեղեցի չեն գնում, իսկ պարզ հավատացյալների համար լեզուն չի խոչընդոտում եկեղեցում կատարվող աստվածպաշտությունը հասկանալու համար:

## ՈՒԽՏ ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ

Թբիլիսիում բնակվող հավատացյալ մի զույգ որոշել է ոտքով Մոսկվա գնալ եւ իրենց պատրաստած իկոնան նվիրաբերել Մոսկվայի Ս. Ամենափրկիչ տաճարին: Ինչպես հայտնում է վրացական հեռուստաընկերություններից մեկը, նրանք մտադիր են ուխտագնացությունն ի կատար ածել ապրիլին՝ Զատկի կապակցությամբ: Այս անօրինակ քայլի ծախսերն իր վրա է վերցրել Թբիլիսիի քաղաքապետարանը:



## ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ը ԿԴԱՌՆԱ ԱՂՈԹՔԻ ԵՎ ՊԱՀՔԻ ՕՐ ԱՍՈՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ասորի քրիստոնյա Քեն Ժոզեֆ կրտսերը դիմել է ողջ քրիստոնեական աշխարհին՝ խնդրանքով, որ փետրվարի 16-ն աղոթքի եւ պահքի օր հռչակվի Իրաքում բնակվող ասորիների համար: Այսօր Իրաքում ապրում է շուրջ 2 մլն. ասորի: Իրաքում ստեղծված անառողջ մթնոլորտի եւ սպասվող պատերազմի պատճառով վտանգված է նաեւ նրանց ֆիզիկական գոյությունը:

## ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԴԵՄ Է ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Վրաց Պատրիարք Իլյա Բ-ն կոչ է արել բոլոր շահագրգիռ կողմերին ամեն ինչ անելու՝ կանխելու համար իրաքյան պատերազմը: Այս մասին նա հայտարարություն է տարածել ԶԼՄ-ների միջոցով: Վրաց եկեղեցու գահակալը կոչ է արել բոլոր ուղղափառներին աղոթելու խաղաղության համար:

## ՓԱԿՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական խնդիրների պատճառով փակվել է Keston news service լրատվական գործակալությունը, որի հիմնական նպատակն աշխարհին կրոնական ազատության մարզում կատարված խախտումներին ծանոթացնելն էր: Գործակալությունը հիմնադրվել էր 1970 թ. եւ ավելի քան 30 տարի կրոնական լուրեր մատակարարել հանրությանը:

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՈՐ ԳՐՔԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

Ուկրաինայում լույս է տեսել քրիստոնեական հիմունքներին վերաբերող նոր դասագիրք՝ «Աստվածային աշխարհն ու ես» վերնագրով, որի հեղինակը հոգեւորական է: Գրքի հեղինակ քահանան հետաքրքրաշարժ ձեւերով ծանոթացնում է երեխաներին քրիստոնեական կրոնի հիմունքներին: Դասագիրքը լիովին համապատասխանում է դպրոցական ծրագրերի պահանջներին, չունի դավանաբանական բնույթ, հաշվի է առնված մարդու ընտրության եւ կրոնական համոզմունքների ազատությունը: Հեղինակի նպատակն է եղել երեխայի մեջ սեր արթնացնել շրջապատող աշխարհի նկատմամբ: Դասերը երեխայի մեջ մեծավ մասամբ դաստիարակում են մարդասիրություն, պատասխանատվության զգացում եւ այլ առաքինություններ:

## ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԵՑ ՄԻԱՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Բելգիան դարձավ երկրորդ պետությունն աշխարհում, որ օրինականացրեց միասեռականների ամուսնությունը: Բայց տեղի կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսները հայտարարել են, որ նմանատիպ դեպքերը երբեք չպետք է ամուսնություն կոչել:

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆՎԻ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԱՊԱԳԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իտալիայի քաղաքական շրջանակները կոչ են արել Եվրախորհրդին, որ ապագա սահմանադրության մեջ արտացոլվեն նաեւ քրիստոնեական արժեքները, քանի որ եվրոպական երկրների մեծ մասում դրանք երկրի անքակտելի մասն են:

*Լրաքաղը՝*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝** Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝** Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝** ք. Վաղարշապատ, ՔԴԿ
**հեռախոս՝ (0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Տպոր. է տպագր. 15. 2. 2003 թ.
**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**